



4. ԳԱՐԱՍՈՒՆ ՀԱՐԱՄԻ

Ավալ ժամանակին ըլնում ա շինում մի մարդ, մի կնիկ, Մրանք շատ քյասիր, դառն-աղքատ են ըլնում: Մրանք ունենում են մի մինումար տղա: Էդ տղին ինչ փեշակի տալիս ին, ինչ գործի դնում ին, ոնչ մի տեղ էլա չեր բնակալում. մի քանի օր մնում էր, էլ եդ թողում, գալի իրանց տունը:

Վերջը էդ տղեն գալիս ա հորնըմերը ասում.— Հմի էլ րե՛րեք ինձ տվե՛ք դերձկի աշկերտ. բալքի էդ փեշակը սիրտս վեր ա ունում, հավանում եմ, մնում եմ, մարդ դառնում:

— և՛վ,— ասում են հերնըմերը,— ա՛րի ըտ էլ փորձենք, տեհանք ի՛նչ կդուս զա:

Վեր են ունում դրան տալի դերձկի աշկերտ: Էդ դերձիկն էլ թագավորի դերձիկն ա ըլնում:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, օրեն մի օրը թագավորը իրա դերձկին կանչում ա, մի խաս կտոր տալի, ասում.— Տա՛ր ինձ հմար մի կապա կարա՛. համա որ խարար ես արե, իմաց կաց գլուխդ կֆը՝ ուս:

— Ա՛չիս վրեն,— ասում ա դերձիկը:

Թագավորին գլուխ ա տալի, կտորը վեր ունում, թողում գալի: Գալիս ա դուքան, կտորը դնում դազգյահի վրեն ու ինքը էթում

տուն հայ ուտելու Հենց ուստեն ոտք դուքանիցը դուս ա զնում
թե չէ, էդ աշկերտն ա՛ վեր ա ունում մկրատը, ընկնում էդ կտորի-
ջանին, մանղո-մանղը կոտորում, վեր ածում, յանի թե ձեռում ա-
Անց, ա կենում մի սհաթ, ուստեն գալիս ա. ո՛ր չի տենում աշ-
կերտի արարմունքը, մազերը գլխին բիղ-բիղ պ կանում:

— Ա՛յ քու եդ քցողի ըսե՞նց, ընե՞նց...

Ասում ա ու փետք վեր ունում, վրա պրծնում, որ նրան մի լավ
սալշարդ անի թողա: Ընշանք նրա փետ վեր ունիլը, աշկերտը ծըլկ-
վում ա, յա՞լա դպա դուզ տուն: Որ գալիս ա տուն, հերնըմերը
բարկանում են տղի վրեն:

— Ա՛յ որդի, — ասում են, — բա՛ ի՞նչ անենք. ո՛րդի տալիս
ենք, բանդ շես ընում, թողում ես, փախնում: Զէ՛ որ մընք էլ մեղք-
ենք. խի՞ ես մեր սիրտը մաշում, թողում:

— Բաս որ ըտենց ա, ա՛յ հեր, — ասում ա տղեն, — էզուց մի-
րուշամիշ ա՛ռ, լցրա՛ արխալիս ջովստ ջերը, իրար հեննա էթանք.
որդի շամիլը հատնի, ընդի ինձ աշկերտ տո՞ւ

— Լա՛վ, — ասում ա հերը, — ըստ էլ փորձենք, տեսանք:

Էզսի օրը, առավոտը գշերով-գշերհանա հերը ճամփի պաշար-
ա վեր ունում, տղին աղաք անում, տանում բազար, մի քանի գըր-
վանքա շամիշ ա առնում, լցնում տղի ջովստ ջերը, ընկնում ճամ-
փա: էթում են, էթում են, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախ-
լասի՝ մի օր, իրիկունը հասնում են մի շոլ, յարանի տեղ: Ըտե շա-
միլը հատնում ա:

— Ա՛յ հեր, — ասում ա, — ես ըստե աշկերտ կըլնեմ:

— Ա՛յ որդի, — ասում ա, — ըստե ո՞ւմ կշտին ես աշկերտ ըլ-
նում: ըստե ո՞նչ մարդ կա, ո՞նչ մադաթ:

Հենց էդ խոսքի վրեն տենում են էն դհիցը մի մարդ ա գալի:

— Ա՛յ հեր, — ասում ա, — հրեն էն դհիցը մի մարդ ա գալի.
ինձ տո՞ւ նրան աշկերտ:

Էդ մարդն ա՛ գալիս ա, հասնում դրանց կուզտը:

— Բա՛րով, — ասում ա էդ մարդը:

— Բա՛րով, ասսու հազար բարին, խերին, — ասում ա հերը:

— Ի՞նչ մարդ եք, ի՞նչ եք շինում ըստերանք, — հարցնում ա-
էդ մարդը: Օձն իրա պորտովը, զուշն իրա թենովը ընշանք օրս ըս-
տերանք ոտ չի դրե, դուք ո՞նց էք սիրտ արե, էկե!

— Քու սե՛րն ա՛ բերե, — ասում ա հերը, — բերել եմ տղիս՝ քու.

կուշտը աշկերտ տամ: Ի՞նչ փեշակի ես, ա՛ղպեր,— հարցնում ա:

— Մենք որ կանք, — ասում ա: — քառասուն Հարամի ենք, գեղեները գալիս ենք գեղարենքը, թալանում, տուն կտրում, մախւասի՝ ի՞նչ ձեռներս ընկնում ա, թոցնում ենք, գալի ըստեն: Հմի դու զիտաս, — ասում ա, — որ տղիդ տաս մեր կուշտը աշկերտ, ըստոնք պատի սարվացնենք. կտաս՝ դու զիտաս, չես տա՝ էլի դու զիտաս:

— Այ հեր, — ասում ա բեղովաթ տղեն, — էս հենց իմ բանն ա, սրանից էլ լավ փեշակ լինի. աշխարքի հարստություն, խազինա, մալ ու դովլաթ թոփ կանեմ:

— Դո՛ւ զիտաս, ա՛յ որդի, — ասում ա, — մեղքն ու վարձքը բու շլինքը:

Ասում ա, տղի ջուխտ թուշը պաշում, տղի կուրը բռնում, տալի էդ մարդին, նրա հենա մնաս բարով անում, վե կենում, եղ դառնում դպա տում:

Էդ Հարամին ա, տղին աղաք ա անում, տանում: Գալիս են գալի, շատն ու քիշն աստոծ զիտա, հասնում են մի մենծ քարի կուշտ:

— Էս քարը տե՞նում ես, — ասում ա Հարամին, — մեր տունը սրա տակին ա, որ կէթանք կմննենք նեքսե, մեր Հարամբաշին քոմմքի վիրել նստած ա, կէթաս նրան գլուխ կտաս, ենա կգաս, քոմմքի ներքել, դռան տակին կնստես:

— Լա՛վ, — ասում ա տղեն վախլությունիցը դողալոն, — ըտենց կանեմ:

Հարամին էդ քարը բանձրացնում ա. էդ քարի տակին մի ծակ ա բաց ըլնում, էդ ժակովը վեր են գալի ներքե, էլ եդ քարը դնում ծակի բերնին: էթում են էթում, հասնում են դրանց ամարաթը: Մննում են ամարաթը, տղեն տենում ա հրեն քառասուն Հարամին, յարաղ, ասպարի միջի կորած, նստոտած են: էթում ա Հարամբաշուն վլուս ա տալի, դռան տակին նստում:

Անց ա կենում մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, Հարամբաշին ձեն ա տալի: — Ո՞րդի ա մի դոշաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՛:

Էդ տղեն մնում ա արմացած, որ տենում ա՝ ընկորտանցից ոչ մինն էլ ա ձեն-ծպտոն չի հանում: Վեր ա կենում տեղիցը, կաննում:

— Աղա՛: — ասում ա, — ես կէթամ, կանեմ, կրերեմ:

— Առ'ա, — ասում աւ Հարամբաշին, — էսքամ խալիսը ձեն չհանեցին, դու բիրակնիցը զոշաղ էլար:

Տղեն էլ եղ նստում ա իրա տեղը, տաղ անում: Անց ա կենում մի սհաթ, Հարամբաշին թաղադան հարցնում ա. — Ո՞րդի ա մի զոշաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՛:

Ընկերուինքը էլի ձեն չհանեցն: Տղեն էս որ տեհավ, էլի տեղը վե կացավ:

— Աղա՛, — ասեց, — ես կէթամ, կէփեմ, կբերեմ:

— Ձենդ կտրա՛, — ասեց Հարամբաշին, — շա՛տ պտի զահլես տանես:

Էլի խեղճ տղեն սուս կացավ, տեղը նստեց:

Անց կացավ մի վախտ, էլի Հարամբաշին ձեն տվեց. — Ա՛յ մի զոշաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՛:

Ընկերուինքը էլի տաղ են անում: Տղեն էս որ տենում ա, էլի չի համբերում, վեր ա կենում, կաննում:

— Աղա՛, — ասում ա, — դրանում ի՞նչ կա. թող ես էթամ, անեմ, բերեմ, է՛լի:

— Լա՛վ, — ասում ա Հարամբաշին ընկորտանցը, — տարե՛ք սրան համամը շա՛նց տվեք, թող էփի՝ տենանք, որ ըսենց զուգուգանում ա:

Հարամիթը վեր են ունում ինչ որ պետքն ա՛ եղ, ալիր, շաքար, ցախ, տանում են համամը հեռվից շանց տալի, իրանք թողուգալի:

Էդ տղեն ա՛ զադ-մադերը վեր ա ունում, մննում համամը. տենում ա՛ մարդ, մադաթ չկա, էն սհաթը բերում ա օջաղը սարքում ա, կրակ անում, թալվեն դնում վրեն:

Հալվեն էփում ա պրծնում, թալի պողը բռնում ա, հենց ուզում ա դուս գա, էն սհաթը հերդկիցը մի կնիկ, փետե գդալը ձեռին, ձեն ա տալի. — Ա՛յ տղա, ա՛յ տղա, — ասում ա, — ի՞նչ կըլնի մի գդալ հալվա տաս՝ ուտեմ:

— Բե՛, նա՛նի ջան, — ասում ա տղեն, — բե՛ տամ:

Տղեն գդալը ձեռիցն առնում ա, տալի հալվի մեջը, վեր ունում, տալի էն կնկանք: Էդ կնիկը հալվեն ալուստի ուտում ա, պրծնում, էլի ա ուզում: Տղեն էլի ա տալի: Ըսենց մին, էրկու, իրեք, էն կնիկը քանի ուզում ա՛ տղեն տալիս ա:

Վերջը որ շատ զահէն տանում ա, թավեն վեր ա ունում, հենց
ուղում ա դուա գա, կնիկը ձեն ա տալի.— Այ տղա, այ տղա, քեզ
վարձք ա, ի՞նչ կըլնի կաննես, ոտս դնեմ ուսիդ, վե գամ, լեղանամ:

Տղեն էն սհաթը թավեն վեր ա զնում, կաննում, կնիկը ոտը
զնում ա տղի ուսին, վե գալի ներքև: Հենց վեր ա գալի թե չէ, վրա
ա հասնում տղին, որ վեր ունի, գեննովը տա. տղեն էլ կնկա յախա-
մախեն ա հավաքում, ըստե էրկսով կոխ են պրծնում: Կոխ են
պրծնում, կոխ են պրծնում, տղեն կնկանը տալիս ա գեննովը: Կնի-
կը ամոթու վեր ա կենում, փախնում; մաշկի թայն էլ թողում ա
ընդե:

Տղեն մաշկիկը վեր ա ունում, ի՞նչ աենում՝ շուտես, շամես, էդ
մարգարտաշար մաշկին թամաշ անես, էնքա՞մ մի սիրունիկ զադ
էր: Էդ մաշիկը վեր ա ունում, բերում, տանում հալվի հեննա զնում
Հարամբաշու աղաքը: Հարամբաշին էս որ չի տենում, մնում ա բե-
րանը բաց. վեր ա կենում, տղի ճակատը պաշում:

— Աֆֆա՛րիմ,— ասում ա,— էսքամ տարի սրտիս ուղածն էս
էր, ընկորտանցիցս ոչ մինն էլ ա սիրտ չէր անում, էթա, բերի.
քոմմբից զուազը դու էլար, որ սիրտ արիր, գնացիր, սրտառուկե-
լիքս բերիր:

Ասում ա ու տղին իրա կշտին նստացնում: Անց ա կենում մի
քանի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախւասի՝ մի շաբաթ,
օրեն մի օրը Հարամբաշին ասում ա.— Մեկն ու մեկդ էս մաշկի
թայը վե կալեք, տարեք բազար ծախեք, հալբաթ մի քանի շայի
կտան, հաց-մաց առե՛ք, ի՞նչ որ պետքն ա՛ առե՛ք, բերե՛ք:

Ո՛վ կտանի, ո՛վ չի տանի, Հարամբանցից ոչ մինն էլ ա
րիրտ չի անում տանի: Վերջը էլի գալիս են, կպնում մեր զուազ
աղի յախեն:

— Թե տանես,— ասում են,— էլի դու կտանես, կծախես,
մարդ չէ:

— Շա՛տ լավ,— ասում ա տղեն,— որ ասում եք՝ կտանեմ:

Վեր ա ունում մաշկի թայը, էթում դպա բազար: էթում ա,
ո՛ւմ տենում ա, շանց ա տալի, շեն առնում, թե. «Մի թայ մաշիկն
առնենք, ի՞նչ անենք»: Վերջը որ շատ ման ա գալի, տենում ա,
ըհը՛, հրես թագավորի նազիրը մոտացավ դրան:

— Այ տղա,— հարցրեց նազիրը,— էդ մաշկի թայը քեզ ո՞ր-
դիան ա, որ ծախում ես:

— Թե՛զ ինչ,— ասեց տղեն,— ժախում եմ, ուզում ես՝ ա՛ռ,
չես ուզում՝ մի՛ առնի:

— Էս թագավորի կնկա մաշիկն ա, — ասեց նազիրը, — արի
էթանք թագավորի կուշտը:

Ասում առ դրան քաշ տալի դպա թագավորի ամարաթը: Տա-
նում ա դուզ թագավորի կուշտը:

— Ա՛յ տղա, — ասում ա թագավորը, — էս իմ կնկա մաշիկն
ա, ո՞րդիան ա ընկե քու ձեռը, դրուստն ա՛սա, թե չէ գլուխդ թոցնիլ
կտամ:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — էս մաշկի
թայը ես ֆլա՛ն վախտը, ֆլա՛ն համամումն եմ զտե:

Նստում ա ըստէ էրկեն ու բարակ, մին-մին, տեղը-տեղին նաղէ
ա անում իրա զվասով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

— Տղա՛, — ասում ա թագավորը, — բաս որ ըտենց ա, քեզ
բաց չեմ թողա, ընշանք սրա թայն էլ շբերես:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — որ ինձ բըռ-
նես, ո՞նց բերեմ, ֆլա՛ն տեղը քառասոմ ընկեր ունեմ, մարդ տո՛ւ,
էթամ նրանց բերեմ, թողամ կշտիդ գրավ, ես էթամ մաշկի թայը
բերեմ. քառասոմ օր էլ ինձ մհուկ տու. շբերեցի՝ մեր արինը քեզ
հալալ ա, ինչ ուզում ես ա՛րա:

— Լա՛վ, — ասում ա թագավորը, — թո՛զ ըտենց ըլնի:

Տղի հեննա զոշուն ա դնում, էթում են էն քառասուն Հարա-
մում բերում իրա կուշտը: Թագավորը հրամայում ա սրանց քցեն
մի օթախ, դուռը վրները զայիմ շինեն, ընշանք տղի գալը:

Էդ տղեն ա՛ ճամփի թագարեք ա տենում, վե կենում, ընկնում
ճամփա: էթում ա, էթում ա, էթում ա, մի օր, էրկու օր, մախլասի՝
իրեք օր, հասնում ա մի գեղի կուշտ: Տենում ա ըտե մի պառավ
կնիկ ճիպոտը ձեռին կաննել. ա մի գերեզմանի վրա, ճիպոտով
տալիս ա ֆողին, ասում. «Յո՛զ, եղ գնա՛», ֆողը եղ ա էթում, տա-
լիս ա մեռին, ասում. «ԱՄԵ՛ՌԵԼ, սաղա՛ցի», մեռելը սաղանում ա:

Էդ տղեն էս որ տենում ա, մնում ա արմացած:

«Ա՛րի, — ասում ա ինքն իրան, — մի ճիպոտը ձեռիցն առնեմ,
տենամ հունարը ճիպոտումն ա, թե պառավումը»:

Ասում ա ու վրա հասնում պառավին: Սա՛ նրան, նա՛ սրան,
սա՛ նրան, նա՛ սրան, վերջը տղեն զոռում ա, պառավի ձեռիցը ճի-
պոտն առնում ա ու պո՛մի:

Էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա
մի քաղաք: Տեսում ա սաղ քաղաքը տխուր-տրտում, որ ասես, սաս
ու սամուր չկա: Մի մարդ ընդիան տեսնում ա էդ ղարիպ տղին, մո-
տանում ա դրան:

— Ղա՛րիպ աղպեր,— ասում ա էդ մարդը,— օձն իրա պորտո-
վը, զուշն իրա թեռվը ընշանք օրս սիրտ չի արե ըստերանք ոտ զնի,
զուո՞նց ես սիրտ արե, էկե. որ թագավորը իմացել ա, մենծ թիքեն
անկաջդ կթողա:

— Խի՞՝, ի՞նչ ա պատահե, — հարցնում ա տղեն:

— Է՛լ ի՞նչ պտի պատահի, — ասում ա էն մարդը, — մեր խեղճ
թագավորն էր՝ մի մինումար տղա, էս ա մի տարի ա՝ մեռել ա. հի-
վանդ վախտը աշխարքումը ի՞նչքամ զլովս հեքիմ կար՝ բերին, ի՞նչ
դեղ, դարման ասես՝ արին, ճար, իլլամ շէլավ, լավացավ, հմի էլ
մի պոլոլիկ տարի սաղ քաղաքը սուգ ա պահում թագավորի տղի
հմար. անումը ղարիպ մեր քաղաքը չի կարում ոտ զնի, թագավորը
քոմմքի զլովսն էլ, սրտի հերսիցը, կտրիլ ա տալի:

— Ո՞րդի ա ձեր թագավորի տղի գերեզմանը, — ասում ա, —
ես կսաղացնեմ:

— Ա՛յ տղա, մի՛ անի, մի՛ ըլնի, ջահել-ջիվան ես, աշքդ մու-
րազի ա, գնա՛ արեիդ ձենն ածա. խի՞ ես զուր տեղը անդալ զլովսդ
զալմաղալի մեջ քցում:

— Զէ՛, որ չէ, — ասում ա տղեն, — քու ի՞նչ բանն ա, զու ինձ
տար թագավորի կուշտը:

— Լա՛վ, — ասում ա, — որ ուզում ես՝ է՛թանք:

էդ մարդն ա՝ տղի կուրը բանում ա, տանում դուզ թագավորի
ամարաթը: Նրան զուանը կաննացնում ա, ինքը մննում նեքսե, թա-
գավորին զլովս տալի, ընդե կաննում:

— Հը՛, խի՞ ես էկե, ի՞նչ խնդիրք ունես, — հարցնում ա թա-
գավորը հերսուտած:

— Թագավա՛վորն ապրած կենա, — ասում ա, — մի ղարիպ տղա
ա էկե մեր երկիրը, ասում ա. «Ես թագավորի տղին մեռած տեղի-
ցը կվեկացնեմ»:

— Ո՞րդի ա էդ տղեն, — հարցնում ա թագավորը:

— Հրե՛ն զուանը կաննած ա. թագավորն ապրած կենա, թե
կհրամայես, էթևմ կանչեմ, զա:

— Թո՞ղ զա, — ասում ա, — տենանք ի՞նչ մարդ ա:

Էս մարդն ա՝ էթում ա տղին կանչում, բերում թագավորի կուշ-
տը: Տղեն գալիս ա, թագավորին զլովս տալի, ընդե՛ կաննում:—
— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա թագավորը, — ո՞րդիան ես
դալի:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — ես ֆլա՛ն
մարդն եմ, ֆլա՛ն երկրիցն եմ գալի:

— Բա ո՞նց ես սիրտ արե, էկե իմ քաղաքը. շե՞ս գիտա, որ
սրտիս հերսիցը քոմմքի զլովսն էլ կտրիլ եմ տալի:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — էկել եմ տղիդ
սաղացնեմ:

— Բերան չի, եկեղեցի ա, — ասում ա թագավորը, — էրնակ չի
սաղացնես. սաղացրիր՝ քաշովդ մին ոսկի կտամ. շաղացրիր՝ իմաց
կաց զլովսդ կֆը՛ռու: Ղա՛րուկ ես:

— Ղա՛րուկ եմ, թագա՛վորն ապրած կենա:

— Ղարո՞ւկ ես:

— Ղա՛րուկ եմ:

— Ղարո՞ւկ ես:

— Ղա՛րուկ եմ, թագա՛վորն ապրած կենա. շկարացի՛ արինս
քեզ հալալ ա:

— Բաս որ ըտենց ա, — ասում ա, — սրան տա՛րեք տղիս գե-
րեզմանը շա՞նց տվեք:

Նազիր-վելիրը սրան աղաք են անում, տանում թագավորի
տղի գերեզմանի վրեն կաննացնում, որ ամարաթի կշտին էր: Թա-
գավորն էլ էթում ա իրա փանջարի աղաքին կաննում, ասում ա.
«Տեսամ ոնց ա տղիս մեռած տեղիցը վե կացնում»:

Էղ տղեն ա՝ պառավի ճիպոտը փեշի տակիցը հանում ա, տա-
լիս ա գերեզմանի քարին. «Քար, դե՞ն գնա», ասում ա:

Ալրիալը բարը դեն ա էթում: Եննա ճիպոտովը փողին ա տա-
լի. «Ֆո՞զ, դե՞ն թափի» ասում ա:

Էն սհաթը փողը դես, դեն ա ցվովում, մեռելը էրնում ա:

Ճիպոտովը մեռլին ա տալի. «Մեռե՛լ, սաղա՛ցի» ասում ա:

Մըն էլ տեհան ի՞նչ՝ թագավորի տղեն փոշտաց, մեռած տե-
ղիցը վե կացավ, դիք կաննեց: Թագավորը էս որ տեհավ, ուրա-
խությունիցը իրան փանջարիցը քցեց ներքեն. վազեց փաթթվեց տղի
շլնքովը:

— Տղա՛, — ձեն տվեց թագավորը, — լիզուդ ի՞նչ պտտում ա,

ասամ. սաղ թագավորությունս էլ ուզես, իմաց կաց կտամ, շեմ խնայի:

— Զէ՛, թագավորն ապրած կենա,— ասեց տղեն,— զադ շեմ ուզում, մենակ քո գյամշուն ա'սա, որ ինձ ծովն անցկացնի էն էրեսը:

— Էդ ի՞նչ ա, որ ուզում ես,— ասեց թագավորը զարմացած,— քաշովդ մին ո'սկի ուզա, մա'լ ուզա, ոռ'լվաթ ուզա՝ տամ:

— Զէ՛, թագավորն ապրած կենա,— ասեց,— քու մալ ու դոլ-վաթը քեզ հալալ ըլնի, ինձ մենակ անցկացրա՛ ծովի էն դրաղբ-սրանից պավայի ուրիշ բան շեմ ուզում:

Թագավորը տղին որ շատ զոռում ա, տենում ա ո'նչ ոսկի ա ուզում, ո'նչ մալ, ո'նչ դոլվաթ, մախլասի՛ ըսկի զատ չի վեր ունում, կանչում ա իրա գյամշուն:

— Էս տղին,— ասում ա,— կղնես գյամին, կտանես սաղ-սաւ-լամաթ կանցկացնես ծովի էն դրաղբ, էլ եդ կթողաս, կգաս:

— Թագավորն ապրած կենա,— ասում ա գյամշին,— էս մի-ամիս ա' գյամին չի բանում. հենց էթում ա, հասնում ծովի մեջ-տեղը, թիրդան ջուրը տակն ու վրա ա ըլնում, լափին տալի, գյա-մին քիշ ա մնում շուռ գա, շենք գիտա էս ի՞նչ բան ա:

— Ի՞նչ ուզում ա ըլնի,— ասում ա տղեն,— որ իմանամ պտի ձկների փայ ըլնեմ, էլի պտի անցկենամ:

— Դո՛ւ գիտաս,— ասում ա գյամշին,— մեղքն ու վարձքը քու շինքը, որ ասում ես՝ կտանեմ:

Էթում ա գյամին սարքում, տղին նստացնում, ընկնում ճամ-փա: Էթում են, էթում, շատն ու քիշն աստոծ գիտա, հասնում են-հենց ծովի մեջտեղը՝ ջուրը էլի տակն ու վրա ա ըլնում, քիշ ա մնում գյամին շուռ տա: Գիզիջըդ տղեն՝ ալրիալը շորերը հանում ա, իրան քցում ծովը, սըկվում ջրի տակը: Ջրի տակին էթում ա, էթում, հասնում ա' ծովի անտակը, ի՞նչ տենում՝ մի պառավ կնիկ նստել ա, մատին էլ մի մատանիք կա, որ մատանիք ակը անում ա դպա ջուրը, էն սհաթը ծովը տակն ու վրա ա ըլնում, ալեկոր-ծումն ընկնում: Ձանըմսան տղեն՝ էս որ-տենում ա, վրա ա հաս-նում պառավին, հեղտիստորում, մատանիքը ձեռիցն առնում, էլ եդ գուս դալի ջրի էրեսը: Ալրիալը ծովը հանդարտում ա: Գյամշին մնացել էր շիվարած, թե էս տղի միջին ի՞նչ հունար կա, որ սըկվեց ջրի տակը, ծովը ալրիալը հանդարտեց: Էթում են, էթում, շատն ու

քիշն աստոծ գիտա՞մ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՞ մի շաբաթ, դուս են զալի ծովի էն էրեսը Որ հասնում են ծովի ղրաղը, տղեն զյամշու հեննա մնաս բարով ա անում, մի ճամփա բռնում ա, էթում:

Էթում ա, էթում ա, էթում ա, հասնում ա մի զլովլի բազ: Բաղիցը վեր ա զալի էն դիմը, տենում ա միշին մի ամա՛րաթ, մի ամա՛րաթ, մի ամա՛րաթ, որ չուտես, շնմես, շհադնես, շմաշես, հենց էդ ամարաթին թամաշ անես՝ էնքա՛մ մի լավ շինած էր: Դուռը բաց ա անում, մննում ներսեն, ի՞նչ տենում՝ մի սո՞ւիրա ա բաց արած, մի սո՞ւիրա ա բաց արած, որ ասսու ամեն բարիքը միշին կար: Էդ տղեն էլ զաթի սոված, նիտից ընկած, վրա ա պրծնում, որ ուտի: Հացին ձեռ ա տալի՝ ուզում ա կտրի, զնի բերանը, հացը դառնում ա մի բուրը ցորեն, շաղ անցնում գեննին. տապակած հավի վրեն ա ձեռը դնում՝ հավն ա սաղանում. խաշած ձկանն ա ձեռ տալի՝ ձուկն ա սաղանում, խորլատալեն ձեռիցը վեր ընկնում. մախլաս՝ զլիներդ ի՞նչ ցավացնեմ, ընչի ձեռ ա տալի՝ տեղիցը ժաժ ա գալի, զե՞ս, զե՞ն թափում, յա սաղանում, ձեռիցը դուս պրծնում, վեր ընկնում:

«Թա՛լի, — ասում ա ինքն իրան, — կա չկա, ըստե մի բան կա»:
Տենում ա դռան կշտին հրենիկ մի բովսարի, վրեն էլ սիպտակ փարդեն կախ արած:

Ասում ա, ոՄննեմ էս բովսարին, տափ կենամ, տենամ սրա վերջն ի՞նչ ա ըլնումա:

Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մըն էլ տենում ա՝ հրենիկ իրեք նաշխուն, սիրուն աղունիկ թռան, էկան, վեր էկան, իրանց խրխիքը հանեցին, դառան իրեք ջա՛հել, ջի՛վան, ջե՛յրան, հուրի-մալաթ աղզկեք, ընդե կաննեցին: Ենիս մոտացան սուփրին, որ հաց ուտեն, տեհան ամանիքը ըստե-ընդե գեննին թափուտած, շաղ անցած, կիրակրները խառնըշտորած, վեր ածած, մախլասի՝ ոնչ մի բան իրա տեղը չի:

— Կա չկա, — ասեցին, — ըստե իսանաորդի ա մտե, մեր սուփրին իսանաորդու ձեռ ա դիպե: Տենաս ո՛վ ա էլե, ո՛վ չի էլե, որ սիրտ ա արե, մտե մեր ամարաթը:

Շատ միտք արին, խելք խելքի տվին, ման էկան՝ շգտան:

— Ա՛խ, — ասեց մենծ քիրը, — բաշկա էն տղեն ըլներ, որ համամի միշին հալվա էփեց, հեննես կոխ պրծավ, ինձ ախտեց, մաշ-

կիս թայը վե կալավ, գնաց: Ըստե ըլներ, ես պաշեի՝ քեզ տայի,
դու պաշեիր՝ նրան տայիր, նա էլ պաշեր՝ ինձ տար:

— Ա՛խ,— ասեց միջնեկ քիրը,— էրնեկ էն տղեն ըլներ, որ ես
ճիպոտով մեռելներ ի սաղացնում, էկավ գլխիս բամբաչեց, ճի-
պոտը ձեռիցս առավ, գնաց: Ըստե ըլներ, ես պաշեի՝ քեզ տայի,
դու պաշեիր՝ նրան տայիր, նա էլ պաշեր՝ ինձ տար:

— Ա՛խ,— ասեց պումուր քիրը,— քաշկա էն տղեն ըլներ, որ
սըկվեց ծովի անտակը, մատանիքը ձեռիցս խլեց, փախավ: Ըստե
ըլներ, ես պաշեի՝ քեզ տայի, դու պաշեիր՝ նրան տայիր, նա էլ
պաշեր՝ ինձ տար:

էդ տղեն բովարու միջին ըստոնք որ քոմմա լսում ա, ալբիա-
լը մատը կծում ա:

«Թա՛լի,— ասում ա ինքն իրան,— կա շկա էս էն աղջկեքն
են, որ սար ու ձոր ընկած, քար ու քոլ ընկած սրանց հավարին ման
եմ գալի»:

Ասում ա ու փարդեն ետ ա տանում, բովարու միջիցը դու
գալի, արշա ընկնում, ընդե կաննում: Էն իրեք քիրն էլ դրան որ
տենում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում. Վրա են պըրծ-
նում ամեն մինը մի դիցը տղին պաշում, պաշպարում, պաշելուց
շեն կշտանում: Նո՞ր նստում են թաղաղան հացի. ուտում են, խմում,
քեֆ անում, ասում, խոսում, ջան ասում, ջան լսում:

— Հը՛,— ասում են աղջկեքը, — օձն իրա պորտովը. զուշն իրա
թևովը, ընշանք օրս սիրտ շի արե ըստերանք ոտ դնի, դու ո՞նց սիրտ
արիր էկար:

— Զեր սերն ա բերե, — ասում ա տղեն:

— Սերում կենաս, — ասում են աղջկեքը: — Արի դրուստն առա,
դու մի փորացավ կունենաս, որ ըսենց շոլե-շոլ ես ընկե:

— Հա՛,— ասում ա տղեն, — ձեզանից պահեմ, ասսանից ի՞նչ
պահեմ. հալ նազլ՝ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց բան: — Նստում ա մին-
մին իրա գլխով անցկացածը նազլ անում, ոնց որ ես ձեզ նազլ
արի: — էզուց էլ, — ասում ա, — վաղեն թամմում ա, մաշկի թայը
հասցրի՝ հասցրի, չհասցրի՝ ընկորտանցս գլխները պտի ֆը՝ ուա:

— Արխեին կա՛ց, — ասում են քվերտինքը, — հա վաղա շաւ
ունես, մենք իրա վախտին քեզ ընենց կտանենք, կհասցնենք էն-
թագավորի երկիրը, որ դու էլ շես իմանա:

— Դուք գիտաք, — ասում ա տղեն, — ինչ ուզում եք արեք,

ձեր արած լավությունը հուր հավիտենական մտիցս չեմ քցի, շունքի դուք լրինեիք, ես էլ ի կորած, իմ քառասում ընկերութիւնքն էլ, որ թագավորի կշտին թողել եմ զրավ, վե կացե, էկե:

— Դարտ մի՛ անի, — ասում են, — էն մաշկիցը ինչքամ ուզում ես՝ էս զշեր կորունք, հաղիր կանենք, էգուց վե կունես, կտանես: Հմի դու էն ա՛սա, որ էթաս, ե՛բ կգաս: Մրանից դենը դու գիտաս, որ մենք քուն ենք, դու մերը:

— Իրեք օր ինձ մհո՛վ տվե՞ք, — ասում ա տղեն, էկա՛ հո էկա, չէկա՝ իմաց կացե՛ք գլուխս փորձանք ա էկե:

— Լա՛վ, — ասում են աղջկեքը, — իրեք օր քեզ մհուլ:

Էդ զշեր իրեք քիրը նստում են, հայդ հա՛յ, էն մաշկիցը գործում են, մի էրկու, իրեք հարիր շովատ գործում են, հաղիր անում: Առավոտը զշերով-զշերճանա վեր են կենում, ճամփի թագարեք տենում, ոսկե մաշկները լցնում են մի խուրչնի մեջ, բերանը դայիմ կապում, եննա էդ աղջկեքը իրանց խրխիքը հագնում են՝ դառնում իրեք սիրում, նաշխուն աղունիկ, էդ տղին սրով նստացնում իրանց թևերի վրեն ու թոնում: Էդ իրեք աղունիկը թոնում են, թոնում են, թոնում են. ընշանք իրիկունը հասնում են էն թագավորի երկիրը. գալիս են դուզ թագավորի ամարաթի կշտին վե գալի: Տղեն խուրչինը վեր ա ոմում, քցում շալակը, էթում մննում. դուզ թագավորի ամարաթը: Հենց ընդե հ հասնում, որ ջանլաթները հազրվել են, պտի նրա ընկորտանց գլխները թոցնեն: Տղեն խուրչինը ուսին գալիս ա թագավորին գլուխս տալի, խուրչինը զնում թագավորի աղաքը, ինքը ընդե կանում: Թագավորը մնում ա զարմացած տղին մտիկ անելոն, թե ալուատի էս ո՛րդիան դուս էկավ, ընդե կաննեց:

— Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա տղեն, — մի մաշկի տեղակ հրես խուրչինը լիքը մաշիկ եմ բերե:

Ասում ա, խուրչնի բերանը բաց անում, մին-մին մաշկները հանում, թագավորին շանց տալի, նրա աղաքին կիտում: Թագավորը մնում ա բերանը բաց տղի էրեսին մտիկ անելոն: Ալրիալը հրամայում ա՝ նրա ընկորտանցը բաց թողան, նրանց լավ-լավ փեշ-բաշներ տան, ճամփու դնեն:

Քառասուն Հարամին հո ուրախություններիցը շին իմանում՝ ի՛նչ անեն, ո՛նց էդ տղի լավությունի տակիցը դուս գան:

Տղեն բստե ընկորտանց հենա մնաս բարով ա անում, ասում ա. — Ես մուրազ ոմեմ, պտի էթամ:

Դուն ո գալի շոլը, էն աղունկներին ման գալի, գտնում:

— Հմի ո՞ւր ես էթում,— հարցնում են աղունկները:

— Հորնըմորս կուշտը,— ասում ա տղեն,— ընդիան էլ նրանց վեր ունենք, է՛թանք ձեր երկիրը:

— Լա՛վ,— ասում են աղունկները,— է՛թանք:

Սրան դնում են սրով էլ եղ իրանց թևերի վրեն, թռնում: Թըռնում են, թռնում, հասնում են տղի երկիրը, տանում են նրանց տան կշտին վե բերում: Տղեն էթում ա իրենց տունը: Հերնըմերը որ իրանց տղին տեսնում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում:

— Ա՛յ որդի,— ասում են,— էս ո՞ւր իր էսքամ վախտ, էլ իդ ու թողդ չէրևաց. մի խաբար էլ ա շես զրկում, որ իմանանք սաղսալամաթ ես, մընք էլ միամտվենք:

Նո՞ր տղեն ըստե նստում ա մին-մին իրա զլխով անցկացածը նազլ անում հորնըմորը, ոնց որ ես ձեզ նազլ արի: Էդ զշեր իրանց զադ-մադերը, ունեցած-շունեցածը քոմմա հավաքում են, հարևաններին, բարեկամներին բաշխում, սրա՛ն, նրա՛ն տալի, իրանք դափդարտակ վե կենում, տանիցը դուս զալի: Նո՞ր ամեն մինը մի աղունկի վրեն նստում են, ընկնում ճամփա դպա աղունկների ամարաթը:

Էթում են, էթում են, շատն ու քիշն աստոծ դիտա, հասնում են էն գյուլի բաղը: Աղունկները դրանց ըստե վեր են բերում, ամարաթի դռները բաց են անում, մննում նեքսեւ: Աղունկները իրանց խրխիքը հանում են, դառնում ամեն մինը մի հուրիմալաք աղջիկ, որ շուտես, շվմես, հենց սրանց գյուլ-ջամպալին թամաշ անես՝ էնքա՛մ մի սիրունիկ զադեր ին:

Նո՞ր հարսանքի թագարեք են տեսնում: Էդ տղեն էդ իրեք աղջկա հենեսա պսակվում ա, օխտն օր, օխտը զշեր հարսանիք են անում: Ինչ քե՞ֆ, ինչ ուրախություն, ինչ դափ ու զուռնա՛, որ էլ հալ ու հեսար շկար:

Նրանք հասան իրա՛նց մուրավին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրավին:

